ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՈՎ ԷՋՄԻԱԾՆԻ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՊԱՏՎԻՐԱԿ Պ-Ր. Պ. ԹՈՓԱՔՊԱՇՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԱԾ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պուլկարահայության անունով Էջմիածնի ժողովին մասնակցող փլովդիվաբնակ պր. Պ. Թոփաքպաշյան հետևյալ հայտարարությունները ըրած է մեր խմբագրին։

«Հայաստանի մեջ մեր սպասածեն շատ ավելի արտագին ընդունելություն գտանք։ Մեզ ընդունեցին եղբայրական ողջագուրումներով։ Մեր այցելությունը տնեցավ նաև այն օգուտը, որ փարատեց դաղութահայերու մասին Հայաստանի մեջ գոյացած այն կարծիքը, թե ան ուծացած է հայրենիքեն։

Բախտ ունեցա այցելելու Երեվանի համալսարանը, որ իր զանազան ճյուղերով պատիվ կբերի Հայ ժողովրդին։ Ներկա գտնվեցա թատերական ներկայացումի։ Մեր թատրոնը իր շենքով և գեղարվեստով բարձր է և հիանալի։

Այցելեցի «Արարատ» գինիի և կոնյակի գործարանը։ Տեսա Քանաքեռի ջրաէլեկտրակայանը, որուն համար ծախք եղած է 125 միլիոն ռուպլի։ Հոյակապ և արդիական ձեռնարկ մը, որ լույս և էներգիա կհայթայթե երկրին։ Թեև արձակուրդի շրջանին մեջ, սակայն առիթը ունեցանք տեսնելու Երևանի նախնական և միջնակարգ վարժարաններեն երկուքը։ Առողջապահական շենքեր, մանկավարժական ամեն պայմաններ լրացնող դպրոցներ են։ Հսկա և հանրօգուտ հաստատություն մըն է նաև «Մարի Նուպար» ակնաբուժարանը։ Այցելեցի Օշական, Աշտարակ, Ոսկեվազ, Նոր-Արաբկիր գյուղերը։ Անոնց փողոցներն ալ ասֆալթե են և կոլխոզները լավ կազմակերպված։ Ամեն գյուղ ունի իր ընթերցարանը, դպրոցը և մշակութային հաստատությունները։ Հիվանդանոցներ, մանկամատուներ և հանչային հաստատություններ կծառայեն ժողովուրդի բարօրության։ Ժողովուրդը առույգ, կայտառ և գոհ է իր վիճակեն։ «Մարի Նուպար» ակնաբուժարանի մեջ տեսանք զինվորական մը և կին մը, որոնց աչքերը բոլորովին դարմանված են կուրութենե։ Բաղդ ունեցանք տեսակցություն ունենալու ժողովրդական կոմիսարներու հետ, որոնք պատասխանեցին պատվիրակներու բոլոր հարցումներուն։ Հայաստանի վարիչները ներգաղթի հարցն ալ կը քննեն արտացավությամբ և պետական մարդու վայելչությամբ։ Հայաստանի բոլոր պետական, գիտական և մշակութային գործիչները լուրջ զարգացած և համակրելի անձնավորություններ են։ Ինչ որ ուրիշ ազգեր չեն կրցած ընել հարյուր տարվա մեջ, Հայաստանի ժողովուրդը ըրած է 25 տարվան մեջ։

(«Երևան» հուլիս 25, թիվ 67).

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՈՒ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էջմիածնի Եկեղեցական ժողովին մեջ պուլկարահայությունը ներկայացնող պատգամավորները հետևյալ հայտարարությունները ըրին մեր խմբագրին։ Առաջնորդ Տ. Գրիգոր եպիսկոպոսը հայտարարեց.—

«Ճամբորդությունը անցավ շատ հաճելի և հանգիստ, Սոֆիա—Մոսկվա, Պաքու Թիֆլիս, Երեվան գծով։ Ամեն կողմ արտազեղ ընդունելություն պետական ներկայացուցիչներե, որոնցմե դիմավորվեցավ պատգամավորությունը, կայարաններու մեջ և առաջնորդվեցավ ամենաշքեղ հյուրանոցներ, հետաքրքրվելով մեր ճամբորդության մասին։

Սովետական իշխանությունները բոլոր պատգամավորներու հանդեպ վերաբերվեցան մեծ հարգանքով ու անմոռանալի հոգածությամբ։ Հոգևոր պաշտամունքների խորհուրդի նախագահություն կազմված է ժողովրդական կոմիսարներու խորհուրդին կից թե Մոսկվա և թե Երևան, որոնք իրենց հարգելի նախագահներով և պաշտոնյաներով ամեն տեղ շփման մեջ գտնվեցան պատգամավորներուն հետ, շռայլելով ամեն դյուրություն, որուն նմանին չենք

հանդիպած որևէ երկրի մեջ և որևէ տեղ։

Ազգային—Եկեղեցական ժողովը բացվեցավ ըստ որոշման հունիսի 16-ին։ Օրակարգի նյութ եղող բոլոր խնդիրները լուծվեցան կատարյալ համաձայնությամբ և աննախընթաց ոգևորությամբ։ Կիլիկիո Տ. Գարեգին կաթողիկոսն ու Մայր Աթոռ Տեղակալ Տ. Գևորգ Արքեպ. Չեորեքչյան, այժմ Ներընտիր Կաթողիկոս Ամենյան Հայոց, իրենց խոհական և իմաստուն վարչագիտությամբ ժողովն առաջնորդեցին ցանկացված հաջողության։

Շատ կարճ մնացի Երևան, վեհ. Հայրապետին հրաւէանով գրական աշխատանքի կանչված ըլլալով Ս. Էջմածնո վանքին մեջ զրկվեցա այցելելե այն վայրերն ու հաստատությունները զորս տեսնելով և վայելելով բախտավոր եղան մասնավորաբար աշխարհական պատգամավորներ, որոնք Երևան մնացին միշտ։ Այսու հանդերձ տեսնելու բախտն ունեցած քիչերես իսկ կրած տպավորությունս ամենալավ է, մեծ և գերազանց։ Դպրոց, համալսարան, թանգարան, թատրոն, կինո, զորս տեսնելու առիթն ունեցա, հսկայական աշխատանքներու արդյունք են, ու ոչ միայն պատիվ կբերեն Սովետական Հայաստանին և Հայ ժողովուրդին, այլև նախանձ կշարժեն առաջադեմ երկրներու, որոնք իրենց պետականության առաջին քսանևհինգամյակին չէին աջողած ունենալ մեր հայրենիքին արդյունաբերական, ճարտարարվեստական, մշակութային գեղարվեստական վերելքին մեկ քառորդն անգամ։

Հպարտ պետք է ըլլանք Հայաստանով»։

Սոֆիահայ աշխարհական պատգամավոր ընկ. Գևորգ Մեքթուպճյան իր կարգին հայտարարեց.—

— «Առաջին անգամ չէ, որ կայցելեմ Սովետ. Հայաստան։ Մոտավորապես 10 տարի առաջ դարձյալ գտնված եմ Հայաստանի մեջ։ Նախորդ և ներկա այցելություններուս միջև տարբերությունը այնքան մեծ է, որ մի զարմանաք, եթե ըսեմ, թե Երևանը անճանաչելի գտա։ Ոչ միայն Երևանը։ Այցելեցի նաև Նոր Մալաթիա, Նոր Սեբաստիա, Դվին և Արտաշատ գյուղերը, որոնց կոլխոզները հիանալի տպավորություն կրթողուն ականատեսին վրա։ Առողջապահական բնակարաններ, մաքուր փողոցներ և գյուղերու միջև ասֆալթային ճամբաներ արդիական ավաններու վերածած են զանոնք։ Տնտեսական, գիտական և մանավանդ մշակույթային մարզերու մեջ մեր հայրենիքը հսկայաքայլ առաջադիմած է։ Հակառակ պատերազմական պայմաններուն, ժողովուրդը կենսուրախ, առողջ և հավատավոր իր ապագայի մասին կկերտե բարօր կյանքը։ Պատգամավորները հիացած վերադարձան իրենց վայրերը Հայաստանի իրականությամբ ոգևորելու համար գաղութահայ զանգվածները։ Կուզեմ առիթեն օգտվել



Բուլղարիայի թեմի առաջնորդ Գրիգոր եպիսկ. Կարապետյանը աշխարհիկ պատգամավորների հետ

հայանելու մեր արտադին շնորհակալությունները Սովետական իշխանությանց, Հայաստանի կառավարության, Ամենայն Հայոց կաթողիկոսին և Հայաստանի ժողովուրդին, որոնք սիրալիր գուրգուրանքով շրջապատեցին արտասահմանի պատգամավորները, հայկական հյուրասիրությամբ պատվելով մեզ։ Մասնավոր հաճույքով պետք է հիշեմ Արտասահմանի հետ կուլտուրական կապի ընկերությունը, որուն արժանավոր նախագահ ընկ. Մարիա Պետրոսյան աղնիվ գտնվեցավ գոհացնելու մեր բոլոր խնդրանքները։ Ճամբորդությունը անջնջելի պիտի մնա իմ հիշողության մեջ»։

(«Երևան» հուլիս 14, 64, 1945 թ.)

ԸՆԿ. ԳԵՎՈՐԳ ՄԵՔԹՈՒՊՃՅԱՆԻ ՁԵԿՈՒՅՑԸ ՍՈՖԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ

Էջմիածնի եկեղեցական ժողովին մեջ պուլկարահայության աշխարհական պատգամավոր ընկ. Գ. Մեքթուպճյան անցյալ երկու շաբաթի երեկոյան ժամը 7—30-ին զեկույց մը ըրավ Սոֆիայի հայ հասարակության առջև «Երևան» հառաջ. միության ակումբին մեջ։ Հայրենաբաղձ բազմություն մը փութացած էր լսելու ծաղկող հայրենիքի մասին ընկերոջ կրած տպավորությունները։ Ընկ. Մեքթուպճյան իր զեկույցը սկսավ հետևյալ պարզ, բայց հստակ հայտարարությամբ.

— «Ես ոչ հռետոր եմ, ոչ ալ ակիտատոր։ Արդեն Սովետ. Հայաստանի վերելքը ինքնին այնքան պերճախոս է, որ քարոզության պետք չունի»։ Ընկ. բանախոսը պարզ բառերով և իրապաշտ ոճով մը պատմեց ներկաներուն Հայաստանի ծաղկող մայրաքաղաքին՝ Երևանի կյանքը։ Ներկաները երևակայությամբ փոխադրվեցան Երևանի գեղեցիկ փողոցները, հսկա արդիական շենքերը, գիտական վերջին խոսքով գործող ֆապրիքաները, մշակութային հաստատությունները՝ համալսարան, դպրոց, թատրոն օփերա, սինէմա, թանգարան և մատենադարան։ Բանախոսը չէր մոռացած այցելել Հայաստանի շեն և բարեզարդ գյուղերը, ուր հայ գյուղացին իր նախահայրերեն ժառանգած շինարար ոգիով կկերտե երջանիկ կյանք։ Ոչ միայն քաղաքներու, այլև գյուղերու մեջ հաստատված են և մասնագետներու հսկողության ներքև կգործեն մանկամսուրներ, մանկապարտեզներ, դպրոցներ և ընթերցարաններ։ Հայաստանի էլեկտրոկայանները կշարունակեն ույժ և լույս հայթայթել երկրին արդյունաբերական հաստատություններուն գոհացնելու համար ժողովուրդին օրե օր աճող պահանջները։ Ընկերը շոշափեց նաև ներգաղթի և արտասահմանեն հայ ուսանողություն ղրկելու մասին Հայաստանի վարիչներուն ունեցած տեսակետները։ Իբրև վերջաբան ընկեր Մեքթուպճյան հայտարարեց հետևյալ առողջ մտքերը. «Հայ ժողովուրդը իր ազատությունը կորսնցնելե ի վեր միշտ խաբվեցավ օտարներեն։ Ունեցավ անկեղծ բարեկամ մը, որ օգնության ձեռք երկնցներ իրեն։ Միայն Ռուս մեծ ժողովուրդը ազատեց զայն կորուստե և պատեհություն տվավ անոր, որ մարդավայել կյանքի տիրանա։ Կեցցե Սովետ. մեծ Միությունը, կեցցե Սովետ Հայաստանը, կեցցե փոքր ազգերու ազատարար և պաշտպան Մեծ ՍՏԱԼԻՆԸ»։ Բուռն ծափահարություններով ընդմիջող և վերջացող ճառեն հետո ներկաներու կողմե հարցումներ արվեցան, որոնց գոհացուցի, պատասխաններ տվավ։ Նախագահ ընկ. Գ. Դարբինյան գեղեցիկ խոսքերով փակեց ժողովը։

(«Երևան» հուլիս 28, թիվ 68)

ՏԵՍԻԼՔՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ

Վերադարձան Փարիզի պատգամավորները։ Անոնք թռիչքով անցան քանդված Եվրոպայի վրայեն, հասան հայրենի նավահանգիստը, հավիտենական Արարատի հանդիման մնացած անխոցելի ու անաղարտ։

Մեծ փոթորիկը չէր հասած մինչև հոն, բայց անոր զավակներ գացած էին փոթորիկը դիմավորելու, կասեցնելու։

Անոնք ջերմեռանդ ուխտավորներու պես գացին ծնրադրել հայկական վերածնունդի մեծ տաճարին առջև, որ մեր ծաղկած մայրաքաղաք «գաղցրիկ Երևան»-ն է։

Տեսան քառորդ դարե ի վեր հոն թափ-